

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարրերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ նասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

I. Տրված են 18 և 27 թվերը:

1

Գտնել այդ թվերից մեծի և փոքրի տարրերության հակառակ թիվը:

- 1) $\frac{1}{9}$
- 2) 9
- 3) $-\frac{1}{9}$
- 4) -9

2

Գտնել այդ թվերի գումարը 4-ի բաժանելիս ստացված մնացորդը:

- 1) 1
- 2) 3
- 3) 5
- 4) -1

3

Գտնել այդ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

- 1) 1
- 2) 3
- 3) 54
- 4) 9

4

Գտնել այդ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

- 1) 486
- 2) 54
- 3) 108
- 4) 9

II Գտնել արտահայտության արժեքը.

5 $\frac{3^{11}}{9^6}:$

- 1) $\frac{1}{3}$
- 2) 3
- 3) $\frac{1}{9}$
- 4) 9

6 $(4 - \sqrt{15}) \cdot \frac{\sqrt{5} + \sqrt{3}}{\sqrt{5} - \sqrt{3}}:$

- 1) $4 + \sqrt{15}$
- 2) 1
- 3) 2
- 4) 4

7 $\cos 420^\circ + \tg 30^\circ \cdot \ctg 30^\circ:$

- 1) 2
- 2) $\frac{\sqrt{3}}{2} + 1$
- 3) $\frac{1}{2} + \sqrt{3}$
- 4) 1,5

8 $\frac{\log_{\frac{1}{2}} 8}{\log_3 2 \cdot \log_2 27}$

- 1) $\log_{\frac{1}{2}} 27$
- 2) 1
- 3) -1
- 4) $\log_3 8$

III. Գտնել հավասարման արմատները.

9 $(x-5)(x+3)=8(x+3)$:

- 1) 3
- 2) 13
- 3) -3
- 4) -3 և 13

10 $\sqrt{15-2x}=5$:

- 1) -5
- 2) 5
- 3) 0
- 4) 4

11 $\log_5(3x-20)=\log_2 4$:

- 1) 5
- 2) 15
- 3) 8
- 4) 9

12 $\cos \frac{x}{4} = \frac{\sqrt{2}}{2}$:

- 1) $\pm\pi + 8\pi k, k \in Z$
- 2) $\pi + 8\pi k, k \in Z$
- 3) $\pm\frac{\pi}{16} + \frac{\pi k}{2}, k \in Z$
- 4) $\pm\pi + 4\pi k, k \in Z$

IV. Լուծել անհավասարումը.

13 $\frac{5x}{4} - \frac{2}{5} \geq \frac{3x}{4}$:

- 1) $(-\infty; +\infty)$
- 2) $[0,8; +\infty)$
- 3) $(0,8; +\infty)$
- 4) $(-\infty; 0,8]$

14 $x^2 \leq 16$:

- 1) $(-4; 4]$
- 2) $(-\infty; 4]$
- 3) $[-4; 4]$
- 4) $(-4; 4)$

15 $\sqrt{x-7} \leq \sqrt{3}$:

- 1) $(7; 10]$
- 2) $(-\infty; 10]$
- 3) $[7; 10)$
- 4) $[7; 10]$

16 $\log_3(4x-2) < \log_3(x+16)$:

- 1) $(0,5; 6)$
- 2) $(-\infty; 6)$
- 3) $(-16; 6)$
- 4) $(0,5; +\infty)$

V. Նավակը գետի հոսանքի ուղղությամբ 90 կմ ճանապարհն անցնում է 3 ժամում, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ 80 կմ ճանապարհը՝ 4 ժամում:

17 35 կմ ճանապարհը լաստը քանի՞՞ ժամում կարող է անցնել:

- 1) 11
- 2) 8
- 3) 6
- 4) 7

18 Կանգնած ջրում նավակը քանի՞՞ ժամում կարող է անցնել 125 կմ ճանապարհը:

- 1) 6
- 2) 5
- 3) 2,5
- 4) 3

19 Նավակը գետի հոսանքի հակառակ ուղղությամբ 7 ժամում քանի՞՞ կմ կարող է անցնել:

- 1) 120
- 2) 140
- 3) 110
- 4) 150

20 Եթե նավակը և լաստը միաժամանակ *A* վայրից շարժվեն հակառակ ուղղություններով, ապա քանի՞՞ ժամ հետո նրանց հեռավորությունը կլինի 60 կմ:

- 1) 3
- 2) 2
- 3) 2,4
- 4) 2,5

VI. Տրված են $p(x) = x^4 + 3x^2 - 1$ և $q(x) = x - 1$ բազմանդամները:

21

Գտնել $p(x)$ բազմանդամի իրական արմատների քանակը:

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

22

Գտնել $p(x)$ բազմանդամի արմատների միջին թվաբանականը:

- 1) 3
- 2) 0
- 3) 1
- 4) -3

23

Գտնել $p(x) \cdot (q(x))^3$ բազմանդամի աստիճանը:

- 1) 7
- 2) 8
- 3) 6
- 4) 12

24

Գտնել $p(x)$ -ի $q(x)$ -ի բաժանելիս ստացվող մնացորդը:

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

VII. Տրված են $ABCD$ զուգահեռագծի երեք գագաթները՝
 $A(2;0)$, $B(3;2)$, $D(1;4)$:

25

Գտնել զուգահեռագծի անկյունագծերի հատման կետի կոորդինատները:

- 1) $(3;3)$
- 2) $(2;3)$
- 3) $(1;2)$
- 4) $(3;1)$

26

Գտնել C գագաթի կոորդինատները:

- 1) $(3;-2)$
- 2) $(2;0)$
- 3) $(2;6)$
- 4) $(3;-6)$

27

Գտնել \overline{BD} վեկտորի երկարությունը:

- 1) $2\sqrt{2}$
- 2) $2\sqrt{3}$
- 3) $\sqrt{2}$
- 4) 3

28

Գտնել $3\overrightarrow{AD} - \overrightarrow{BD}$ վեկտորի կոորդինատները:

- 1) $\{9;4\}$
- 2) $\{-3;1\}$
- 3) $\{-1;10\}$
- 4) $\{3;11\}$

VIII. Տրված է $f(x) = x + \sqrt{-x}$ ֆունկցիան:

29 Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

- 1) $(-\infty; 0]$
- 2) $[0; +\infty)$
- 3) $(0; +\infty)$
- 4) $(-\infty; 0)$

30 Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

- 1) 0 և $\frac{1}{4}$
- 2) $-\frac{1}{4}$
- 3) $-\frac{1}{2}$
- 4) 0 և $\frac{1}{2}$

31 Ո՞րն է f ֆունկցիայի նվազման միջակայքը:

- 1) $\left(-\frac{1}{2}; 0\right)$
- 2) $\left[-\frac{1}{4}; +\infty\right)$
- 3) $\left[-\frac{1}{4}; 0\right]$
- 4) $\left(-\infty; -\frac{1}{4}\right]$

32 Գտնել f ֆունկցիայի մեծագույն արժեքը $\left[-4; -\frac{1}{9}\right]$ հատվածում:

- 1) $\frac{2}{9}$
- 2) $-\frac{1}{2} + \frac{\sqrt{2}}{2}$
- 3) $\frac{1}{4}$
- 4) -2

IX. Գլանի հիմքի շառավիղը 5 է, իսկ կողմնային մակերևույթի մակերեսը 4 անգամ մեծ է հիմքի մակերեսից:

33

Գտնել գլանի բարձրության երկարությունը:

- 1) 20
- 2) 2,5
- 3) 5
- 4) 10

34

Գտնել գլանի լրիվ մակերևույթի մակերեսը:

- 1) 75π
- 2) 250π
- 3) 150π
- 4) 100π

35

Գտնել գլանի ծավալը:

- 1) 500π
- 2) 125π
- 3) 250π
- 4) $67,5\pi$

36

Գտնել գլանի առանցքային հատույթի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյունը:

- 1) 90^0
- 2) 30^0
- 3) 45^0
- 4) 60^0

X. Տրված է $\sqrt{x+4} + \sqrt{5-x} = 3$ հավասարումը:

37

Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման ԹԱԲ-ը:

38

Գտնել հավասարման ամենամեծ արմատը:

39

Քանի՞ արմատ ունի հավասարումը:

40

Գտնել հավասարման ձախ մասի արտահայտության արժեքների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:

XI. ABC եռանկյանը ներգծված է $3,5$ շառավիղով շրջանագիծ, որն AB , BC և AC կողմերը շղափում է համապատասխանաբար M , N և K կետերում: Եռանկյան մակերսը 84 է, իսկ AB փոքր կողմը 4 -ով փոքր է CK -ից:

41 Գտնել եռանկյան կիսապարագիծը:

42 Գտնել եռանկյան փոքր կողմի երկարությունը:

43 Գտնել AM և MB հատվածներից մեծի երկարությունը:

44 Գտնել եռանկյան մեծ կողմի երկարությունը:

XII. (a_n) -ը 4 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է, իսկ (x_n) -ը՝ դրական անդամներով և 3 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա:

45

$$b_n = \log_6 x_n \text{ հաջորդականությունը } \frac{1}{2} \text{ տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:}$$

46

$$b_n = a_{3n} \text{ հաջորդականությունը 7 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:}$$

47

$$c_n = \frac{a_n + 3}{2} \text{ հաջորդականությունը 2 տարբերությունով թվաբանական պրոգրեսիա է:}$$

48

$$y_n = x_{2n} \text{ հաջորդականությունը 9 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:}$$

49

$$z_n = x_n^2 \text{ հաջորդականությունը 6 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:}$$

50

$$y_n = 3^{a_n} \text{ հաջորդականությունը 81 հայտարարով երկրաչափական պրոգրեսիա է:}$$

Բ մակարդակ

XIII. Բուրգի բարձրությունը 1,5 է, հիմքին առընթեր բոլոր երկնիստ անկյունները 45^0 են, իսկ հիմքը 6 երկարությամբ կողմով շեղանկյուն է:

51 Գտնել բուրգի հիմքի մակերեսը:

52 Գտնել բուրգի ծավալը:

53 Գտնել բուրգի հանդիպակաց կողմնային նիստերի կազմած անկյան աստիճանային չափը:

54 Գտնել բուրգի բարձրությունով անցնող և կողմնային նիստին ուղղահայաց հատույթի մակերեսի քառապատիկը:

XIV. Երկու ծորակների համատեղ գործելու դեպքում ջրավազանը լցվում է 8 ժամում: Մեկ ժամում առաջին ծորակից հոսում է 1,25 անգամ ավելի ջուր, քան երկրորդից:

55

Մեկ ժամում երկրորդ ծորակից քանի^o %-ով պակաս ջուր է հոսում, քան առաջինից:

56

Միայն երկրորդ ծորակով քանի^o ժամում կարող է լցվել ջրավազանը:

57

Առաջին ծորակով քանի^o ժամում կարող է լցվել այդպիսի հինգ ջրավազան:

58

Քանի^o ժամում կարող է լցվել ջրավազանը, եթե 4 ժամ գործի միայն առաջին ծորակը, իսկ մնացած մասը լցվի միայն երկրորդ ծորակով:

XV. Տրված է $f(x) = 3x^2 - 4x + 4\sqrt{2x-2} + 11$ ֆունկցիան:

59

Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթի ամենափոքր թիվը:

60

Գտնել f ֆունկցիայի ամենափոքր արժեքը:

61

Գտնել f ֆունկցիայի ամենամեծ արժեքը $[2; 3]$ միջակայքում:

62

Քանի՞ ամբողջ արժեք է ընդունում f ֆունկցիան $[1; 3]$ միջակայքում:

XVI. Տրված է $\begin{cases} x^2 + 3x + 2 = 0 \\ 2x + 1 \geq a \end{cases}$ համակարգը, որտեղ a -ն պարամետր է:

63 Գտնել ամենափոքր a ամբողջ թիվը, որի դեպքում համակարգը լուծում չունի:

64 Գտնել բոլոր a ամբողջ թվերի քանակը, որոնց դեպքում համակարգը կունենա միակ լուծում:

65 Գտնել ամենամեծ a ամբողջ թվի մոդուլը, որի դեպքում համակարգն ունի ճիշտ երկու լուծում:

66 Գտնել ամենամեծ a ամբողջ թվի մոդուլը, որի դեպքում համակարգն ունի լուծում:

XVII. Կատարել առաջադրանքները.

67

Չկրկնվող թվանշաններով և 5-ի բազմապատիկ քանի^շ հնգանիշ թիվ կարելի է կազմել 0, 1, 2, 3, 5 թվանշաններով:

68

4-ի բաժանվող քանի^շ եռանիշ թիվ կարելի է կազմել 1, 2, 4, 6 թվանշաններով:

XVIII. Տրված է $f(x) = \sin^2 x - |\sin x|$ ֆունկցիան:

69 Ֆունկցիան կենտ է:

70 Յուրաքանչյուր πn թիվ, որտեղ $n \in N$, ֆունկցիայի պարբերություն է:

71 Ֆունկցիայի գրաֆիկն արսցիսների առանցքի $[0; 2\pi]$ հատվածը հատում է ճիշտ չորս կետում:

72 Ֆունկցիայի փոքրագույն արժեքը $-\frac{1}{2}$ ան է:

73 Ֆունկցիան դրական արժեք չի ընդունում:

74 Ֆունկցիան $\left[-\frac{\pi}{4}, \frac{\pi}{4}\right]$ միջակայքում ունի եքատրեմումի երեք կետ:

XIX. $ABCD$ զուգահեռագծի ($AB \neq BC$) AD կողմի միջնակետը M կետն է, իսկ BC կողմի միջնակետը՝ N կետը: AN և CM ուղղները զուգահեռագծի BD անկյունագիծը հատում են համապատասխանաբար P և Q կետերում:

75 P -ն BQ հատվածի միջնակետն է:

76 $PNQM$ -ը զուգահեռագիծ է:

77 P -ն ABC եռանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնն է:

78 $AP = 3 \cdot PN$:

79 MQD և PNQ եռանկյունները հավասարամեծ են:

80 $ABCD$ զուգահեռագծի մակերեսը մեծ է APM եռանկյան մակերեսից 6 անգամ: